# Շիրակ

**Մակերես՝** 16.7կմ$^2$

**Բնակչություն՝** 1039

shirak.shirak@mta.gov.am

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակի համայնքը զբաղեցնում է
ՀՀ Շիրակի մարզի տարածքի հյուսիս-արեւելյան մասը:
Համայնքի տարածքը կազմում է 16,73 կմ2, ծովի մակերեւույթից 1650մետր բարձրության վրա, հեռավորությունը մարզկենտրոնից 7կմ է,համայնքը ունի մազկենտրոնին միացնող մեկ ճանապարհ որն անցանելի է տարվա բոլոր եղանակներին
Համայնքի բնակչության թիվը կազմում է 1039 մարդ:
Համայնքում կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ բարձրության և արտահայտվում են բարեխառն՝ երկարատև տաք ամառներով ու ցուրտ ձմեռներով: Համայնքի կլիման, թեեւ ընդհանուր առմամբ բարեխառն է, բայց աչքի է ընկնում ցամաքայնությամբ եւ ըստ բաձրության դառնում է ավելի խիստ: Համայնքում տարեկան տեղումների քանակը կազմում է 590 մմ:
Համայնքի տարածքում հացահատիկային կուլտուրաներից հիմնականում մշակվում են ցորեն եւ գարի, մոտավորապես այն կազմում է 59 % : Համայնքում տարեկան մշակվում է 500 հա ցորենի եւ գարու դաշտեր, իսկ 1 հա-ից բերքատվությունը տարեկան կազմում է մոտ 25 ցենտներ:
Համայնքի տարածքում գտնվում է «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության Հացիկ- Ջաջուռ կայարանը:
Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է Ղազանչի եւ Արտեզյան ջրաղբյուրներից, ջրամատակարարաման խողովակների ընդհանուր երկարությունը կազմում է 25.588 կմ: Համայնքի գազամատակարարումն իրականացվում է համայնքի տարածքում առկա գազի 6700 մ երկարությամբ խողովակաշարերով:
Համայնքի էլեկտրամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 35000մ.:
Գյուղի տարածքում գործում է մեկ ուսումնական հաստատություն՝Շիրակի միջնակարգ դպրոցը,
Համայնքի տարածքով հոսում է Շիր կանալը

ՀՀ Շիրակի մարզ, գ. Շիրակ

Ինդեքս՝ 2620